Տ. ԴԵՐԵՆԻԿ ՔԱՀԱՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

(ավագանի անունը՝ Դավիթ)

Ծնվել է 1978 թ. հունվարի 15-ին Արարատի մարզի Շահումյան գյուղում:

1985-1995 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1988-1993 թթ. սովորել և ավարտել է Արտաշատ քաղաքի Մելիք-Փաշաևի անվան երաժշտական դպրոցը:

1995-2001 թթ. ուսանել և ավարտել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանը:

2000 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփանոս Նախավկայի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2001-2002 թթ. աշխատել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում:

2002 թ. հունիսի 10-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Գրիգոր Բ Վկայասեր Կաթողիկոսի խրատները» թեմայով:

2002-2004 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում որպես հոգևոր սպասավոր:

2004-2005 թթ. հոգևոր ծառայության է անցել Արարատյան Հայրապետական թեմի Ներքին Դվինի Ս. Հարություն եկեղեցում:

2005 թ. սեպտեմբերի 11-ին՝ Ս. Խաչվերացի տոնին, ձեռամբ Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի մեկ դուստր: